

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Հ. Հ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

27, Avenue Marceau PARIS.

ԱՃՐԱՓՈՐԶ ՄԸ

Պ. ԱԿԵՏԻՍ ԱՆԱՐՈՆԵԱՆԻ ԴԵՄ

Երկրորդ տեղի պատերազմը խախտած է մարդոց բարսյակահը: Անտանտիկան բնագոյները, հեղ ետապաշտութիւնները, ոճիրը, հոր վիճակագրութիւններու համաձայն, գերակշիռ ծաւալ և համեմատութիւն ստացած են, հերկայ ընկերութեան մէջ: Ամսոյս 26-ին Հ. Հանրապետութեան Պատուիրակութեան հախազած Պ. Ահարոնեանի անձին գէտ եղած ոճրաւորձը, ապահովարար հոյն կարգի ստորին բնագոյներէ թելադրուած խաւար գիտակցութեան մը արդիւնքն էր, քանի մը հարիւր ֆրանք շորթելու համար:

Ոճրաւորձը Մեղրեցի է, Աղեքսանդր Տէր-Չաքարեան անունով, 21 տարեկան: Ա. Տէր-Չաքարեան, չորեքշաբթիի գէտքէն առաջ յաճախակի Հ. Հ. Պատուիրակութիւնը կողար, ամէն անգամ դրամական օգնութիւն ստանալու խնդրանքով: Անիկա արդէն պատուիրակութեան երեք անգամ դրամ ստացած էր, որոնց գումարը կը հասնի 500 ֆր.ի, և միշտ դուռը էր եղբայրական լաւագոյն ընդունելութիւնը պատուիրակութեան անդամներուն մօտ հիւատի ունենալով իր մատղաշ տարիքը և նախկին ուսանողի հանգամանքը: Շեշտենք սակայն սա հեղապեղ կէտը որ ոճրաւորձին վայրենաբարոյ հոգեբանութեան վրայ լոյս կը սփռէ — ամէն անգամ որ օգնութիւն կ'ստանար, փոխանակ շնորհակալիքի, չէր վարաներ տրանջալու, երբեմն ալ ուսերէն հայհոյանքներ ստնեցնելու բերնէն և հոյն իսկ սպանալու: Անտարակոյս էր որ պզտիկ գումարները անբաւական էին ճիշտ սպրեւել Փարիզի մէջ, և շատ աւելի մեծ գումարներ կորզելու նախատեսութեամբ է որ ան կողար վերջերս, Պերլին, ֆեթրոկրատ երթալու ճանապարհածախս ուղելու: Պատուիրակութիւնը սակայն մասնաւոր ճանապարհածախսերու համար գումարներ չունէր: Հայաստան վերադառնալու ֆոնտէն նախ տրամադրեց 120 ֆր. մինչև Մարտիլիա երթալու համար, ուրկէ հիւպատոս Պ. Միրզանեան սլտի հոգար զինք մինչև Պաթմոս: Տէր-Չաքարեան առաջարկուած 120 ֆր.ը առնելէ վերջ նախատակին չգործածեց և երբ վեր-

ջին անգամ Պ. Ահարոնեան պատուիրակութեան գանձապահին միջոցաւ առաջարկեց վճարել 50 ֆր. Տէր-Չաքարեանին, վերջինս մերժելով հեռացաւ Պատուիրակութենէն:

Տէր-Չաքարեան, որ իր գործատեղիէն վաճառած էր այդ հաստատութեան գանձապահին վրայ յարձակում գործած ըլլալուն համար, կատարեալ պատուհաս մը դարձած էր արդէն Փարիզի հայ գաղութին դէմքին և քանի քանիներէ յաջորած էր դրամ փրցնել, շատ անգամ սպանալիքով և երբեմն հոյն իսկ յարձակելով ասոր անոր վրայ: Դեռ ոճիրէն օր մը առաջ Փարիզի Առաջնորդ Քիպարեան Ծ. վարդապետէն ոճրագործ երիտասարդը կ'ստանայ 150 ֆր. իսկ նախորդ օրը՝ ամսուն 24-ին, 70 ֆր. վճարելով գնած էր ատրճանակ մը: Ոճրաւորձի օրէն՝ ամսոյս 26-էն առաջ ուրեմն, Տէր-Չաքարեան աւելի քան բաւարար գումար մ'ունէր իր գրպանը. բայց ինչպէս կը տեսնուի մեծ գումարներ շորթելու ճրագիրներ է որ կը սնուցանէր անիկա: Այդպէս է ուրեմն որ ոճրաւորձը չորեքշաբթի օր կը գլխէ Պատուիրակութեան ժամը 11ին տաննէրը, բանի կերպով կը մանէ Պ. Ահարոնեանի աշխատասենեակը և բալոնովին մօտ Պ. Ահարոնեանի՝ գրտահէն հանելով ատրճանակը փող կը պահանջէ, աւելցնելով « Զե՛յ խփեմ թէ ինքզինքս (?) »: Սակայն շանթաժի այս ձեւէն չայլալիւ Պ. Ահարոնեան և մօտենալով ոճրաւորձին, հետզհետէ անոր միտգնած գիտակցութեան հրամայող շեշտով կ'առաջարկէ նախ վար դնել ատրճանակը և յետոյ խօսիլ:

Տէր-Չաքարեան մեքենաբար կը շարունակէ կրկնել. « փող տալի՛ս էք թէ ոչ » և կամ « Զե՛յ խփեմ թէ ինքզինքս խփեմ », իսկ Պ. Ահարոնեան հետզհետէ փոթորկող և շանթահարող թօնով մը կը գողայ միշտ.

— Նախ վար գիր այդ ատրճանակը:

Պ. Ահարոնեանին տիրակա՛ն թօնը պահ մը կ'ազդէ ոճրաւորձին մոլթ հոգեբանութեան վրայ, որ ահա կը շիտթի կարծես և շարժում մը կ'ուրուագծէ զէնքը վար գնելու սեղանին վրայ, բայց հազիւ փայլակի բոպէ մը կը տեսէ այդ ապաշաւի շարժումը և այլալա՛ծ ճիգով մը անիկա կրկին վեր կ'առնէ զէնքը: Պ. Ահարոնեան որ այս գարհուրելի տեսարանին մէկ ծայրէն միւսը բոպէ մը

մինչեւ անգամ չի կորնցներ իր սառնասրտութիւնը, կը գուշակէ որ այս անգամ պիտի կրակէ անիկա, և կայծակի արագութեամբ կը բռնէ ատրճանակին փողը: Ոճրագործը կը կրակէ նոյն բոպէին, բայց գնդակը կը վրիպի բարեբախտաբար և Պ. Ահարոնեանի կուրծքին ուղղութեամբ, և զայն քերելով գրեթէ, կը մխրճուի սլատին մէջ: Տէր Զաքարեան այդ միակ հարուածը կրնայ կրակել, Պ. Ահարոնեան, որ երկաթէ մասնեքով հրազնին փողը միշտ դէպի գետին ուղղուած կը պահէ, և Պատուիրակութեան անդամներ ու պաշտօնեաներ կը յաջողին զինաթափել ոճրագործը, որ օգտուելով ընդհանուր շփոթութենէն, երբ ամենքը Պր. Ահարոնեանի շուրջ կը համախմբուէին անձկոտ ու ալլալած դէմքերով, բաց գտնելով փողոցին դուռը կը յաջողի փախչիլ: Անիկա կը ձերբակալուի սակայն քանի մը քայլ անդին, առաջին փողոցին անկիւնը, պատուիրակութեան ծառային ե տնցարդներու կողմէ, հեւասպառ և ուժաթափ, ու կ'առաջնորդուի ոստիկանատուն:

Տէր Զաքարեան ոստիկանատունէն արդէն փոխադրուած է կեդրոնական բանտը, սպասելով որ ժիւրին արձակէ իր արդար վճիռը այդ հրէշային ոճրին դէմ:

* *

Ֆրանսական բոլոր օրաթերթերը երկարօրէն նկարագրեցին և արտայայտուեցան այս զաղրելի ոճրափորձին մասին, ու թէև ոճրագործը թէ՛ ոստիկանապետին և թէ՛ հարցաքննիչ գատուորին առջեւ իր հարցաքննութեանց ընթացքին աշխատած էր քաղաքական գոյն տալ իր սեւ արարքին՝ հայ ժողովրդին անօթութիւնն ու թշուառութիւնը մէջտեղ նետելով՝ թեթեւցնելու համար իր պատասխանատուութիւնը՝ բայց գրեթէ ամբողջ մամուլը առանց բացառութեան այդ ոճրափորձին շարժառիթը նկատած է հասարակ դրամաշարժութիւնը:

Ոճրափորձին օրն իսկ Ֆրանսայի հանրապետութեան նախագահը, Պ. Միլլըրոն, անմիջապէս և եթ փութացած էր իր զինուորական տան անդամներէն Բօմանտան Մէնարը զրկել Պատուիրակութեան պաշտօնակալը, տեղեկութիւններ առնելու համար Պ. Ահարոնեանի առողջական վիճակին մասին և յանուն Ֆրանսայի հանրապետութեան նախագահին իր խնդակցութիւնները յայտնելու համար անոր անվաս ազատուածին առթիւ:

Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութիւնը նոյն նպատակով փութացուցած էր Հ. Հ. պատուիրակութեան Պ. Նախագահին մօտ իր կցորդներէն Պ. Ն. Գալըպէսը:

Յունաստանի նախորդ վարչապետ Պ. Վէնիզէլոս և Արտաքին գործերու նախարար Պ. Բօլիթիս փութացած են նաեւ նոյնպէս անձամբ Պ.

Ահարոնեանի հաղորդել իրենց սրտազին շնորհաւորութիւնները:

Դարձեալ անձամբ, հեռագրով, թէլեֆօնով, այցետուն ձգելով իրենց խնդակցութիւնները և բարի ազատուածի շնորհաւորութիւնները ներկայացուցած են Փարիզի գրեթէ բոլոր Պատուիրակութեան անդամները և քաղաքական ու դրական աշխարհի պատկանող բազմաթիւ երեւելի անձնաւորութիւններ, ի միջի այլոց Հայաստանի դրացի և մերձակայ պետութիւններէն Պ. Մաքլաքօֆ, ռուսական դեսպանը, Պ. Մանտէլշթամ, Պ. Կէկէչքօրի, Վրաստանի արտաքին գործերու նախարարը, Պ. Թօփչիպաշէֆ՝ Ազրաիլի մարտուիրակութեան նախագահը, Պ. Պէշ, Խուսանի խորհրդարանի նախագահը, Հիւս. Կովկասի և Վրաստանի պատուիրակութեանց բոլոր անդամները, ևն. ևն.

Յունուար 26-էն ի վեր այցելութիւններու շարան մըն է այսպէս, որուն վերջը չի գար: Փարիզի հայ գաղութի բոլոր ծանօթ դէմքերը, սկսած Պօլոս փաշա Նուսարէ, Հոգեւոր հովիւ Տէր Վառլապուհ Ծ. վարդապետէն եւ Տիրայր սրբազանէն, պարտականութիւն սեպած էին անձամբ անձին շնորհաւորել Պ. Ահարոնեանը:

Իսկ հեւաւոր գաղութներէն, թէ հայկական և թէ օտար՝ շրջանակներէ ամէն օր տրցակներով հեւադիրներ է որ կը տեղան՝ Ամերիկայէն, Անգլիայէն, Հարաւ. Ամերիկայէն, Եգիպտոսէն, Յունաստանէն, Զուլիցերիայէն, Գերմանիայէն, Պելճիկայէն, Իտալիայէն ևն. ևն. Պ. Ահարոնեանի հասցէին:

ՈՃՐԱՓՈՐՁԷՆ ՅԵՏՈՅ Պ. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԱՍԱՅԱՍ

Համակրանքի եւ Շնորհաւորութեան հեռագիրներ

Իմացայ ոճրափորձը, որու քիչ մնաց զոհ երթալիք Այս առթիւ կը յայտնեմ իմ սիրալիր համակրութիւններս և բարեկամութիւններս:

Փարիզ 27 Յունվար

Ալպէր Թօմ

Զերմագին շնորհաւորութիւններս մահափորձէն ազատած ըլլալնուդ համար: Սիրալիր զգացումներ Ձերիններուն:

Մօնեօ 27 Յունվ.

Տօքթ. Ռօպէր

Բոլոր շնորհաւորութիւններս ցաւալի ոճրափորձէն ազատուած ըլլալնուդ համար:

Լանտն

Տիգրան Զաքարիան

28 Յունվ.

Հիւպատոս Պէշիգայի

Խորապէս յուզուած Ձեր անձին ենթարկուած վտանգէն՝ երջանիկ կ'զգանք ինքզինքնիս Ձեր ողջ և առողջ ըլլալը գիտնալով: Մեր համակրութիւնները և լաւագոյն բաղ- ձանքները Ձեզ համար:

Ժընեւ 28 Յունիս:

Քրաթթ-Ֆալու

Խորին վշտով և ցասումով կ'իմանանք ոճրափորձը լարուած Ձեր անձին դէմ, որ ամբողջ նուիրում մը եղաւ ազգին: Վարտայայտենք մեր անկեղծ համակրանքի զգացումները:

Մարտիկա 27 Յունիս

Հ. Յ. Դաշնակցութիւն

Մեր ազգին կողմէ աշխարհի սիրուած Ձեր անձին դէմ կատարուած տիմար և հայրենատեաց յարձակումը կը գատապարտենք:

Ի դիմաց Հայ գաղութին

Մանչեսթըր 27 Յունիս:

Գամպէրեան

Նանսիի Ուսանողական Միութիւնը ստորին արարքին հանդէպ իր դարձանքը և Ձեր անձին հանդէպ իր հիացումը կը յայտնէ:

Նանսի 28 Յունիս:

Նանսիի Ուսանող. Միութիւն

Փատովայի Ուսանող. Միութիւնը կը նկատէ անարգ և լիրբ ձեր անձին դէմ՝ զործուած ոճրափորձը, Ձեզ կը յայտնէ իր հաւատքը, համակրութիւնն ու շնորհաւորութիւնները:

Ի դիմաց Փատովայի Ուսանող. Միութեան

Փատովա 28 Յունիս:

Քամպէրեան

Եգիպտոսի Ազգային Միութիւնը Ձեզ կը շնորհաւորէ պախարակելի ոճրափորձէն ազատուած ըլլալնուդ համար և կը յայտնէ իր երախտագիտական և համակրական զգացումները:

Գահիրէ 28 Յունիս:

Զօհրապ

Երջանիկ ենք և կը շնորհաւորենք որ ոճրափորձը չէ փնասած Ձեր անձին, ամբողջ ազգին համար աշխարհի սիրելի:

Պէրլին

28 Յունիս:

Կրինթիլտ, Նադարեան

Տէր Օհանեան, Զաքարեան

Գարշիի ոճրափորձէն ազատուած ըլլալնուդ համար կը հրճուինք և կը շնորհաւորենք Ձեզ:

Թիւթիւնձեան Ընտանիք

Աղեքսանդրիա 30 Յունիս:

Իմ ամենէն խանդաղին շնորհաւորութիւններս փատովա 28 Յունիս:

Հայր Նահապետեան

Իմ ցասումս կը յայտնեմ ստորին ոճրափորձին համար որուն զոհ եղաք և որմէ բարեբախտաբար անփնաս ազատեցաք, ինչպէս նաեւ Ձեզ հանդէպ իմ ամբողջ անձնը- լիրութիւնս և ընտանիքիս համակրութիւնները:

Մարտիկա

27 Յունիս:

Տիգրան Միրզայեան

Հիւպատոս

Շնորհաւորութիւններս և համակրանքս թող Տէրը Ձեզ հովանաւորէ:

Լոնտոն

27 Յունիս:

Աբէլ Աարդապետ

Հոգ. Հովիւ Անգլիոյ

Մանչեսթրի Հ.Երիտասարդներու Քիւլպը իր զայրոյթը կը յայտնէ Ձեր կեանքին դէմ եղած ցածագի ոճրափոր- ձին համար, կ'ուրախանայ Ձեր ազատօգի մնալուն համար, և յայտնելով իր սրտազին համակրութիւնները կը բարե- մաղթէ Ձեզ արագ ապաքինում:

Մանչեսթր

27 Յունիս:

Նախագահ

Մկրտիչ Օտապաշեան

Հաս երջանիկ եմ որ ոճրափորձէն անվտանգ ազա- տած էք. իմ շնորհաւորութիւններս:

Պելկրատ,

28 յունուար

Սափա Կէօրկոյիչ

Հ. Հ. Փոլի-հիւպատոս

Երջանիկ եմ գիտնալուս, որ անփնաս էք զղուելի ոճ- րափորձէն:

Կ. Պօլիս, 30 Յունիս:

Թաճիւն

Հ. Հ. Պօլսոյ զիւանազիտական

ներկայացուցիչ

Փա՛ռք բախտին, որ փրկեց Ձեր սիրելի կեանքը ազգին համար:

Սաղաթէլեան

Նախկին անգամ Տումայի և

Հ. Հ. Խուպանի ներկայացուցիչ:

Իմ ամբողջ ցասումս ստորին ոճրափորձին համար, խնդրեմ ընդունեցէք իմ անկեղծ շնորհաւորութիւններս Պուէնոս Այրէս 27 Յունիս:

Խաչիկեան

Իմ անկեղծ շնորհաւորութիւններս Ձեր առողջ աղա- տուելուն առթիւ:

Լոնտոն 27 Յունիս:

Մալքօլմ

Իմացայ գարշելի ոճրափորձը, երջանիկ եմ Ձեզ ողջ առողջ գիտնալու համար: Խնդրեմ՝ ընդունիլ իմ անկեղծ շնորհաւորութիւններու հետ միասին ամենաջերմ՝ բարձանքներս Ձեր երջանկութեան և առողջութեան համար: Պէրլին, 30 Յունի.

Միշել Տօլուխանօֆ.

Հ. Հ. Պերլինի ղիւանագիտական Միսիսի գին. խորհրդական

Ոճրափորձին համար շատ զայրացած՝ Ձեզ կը յայտնեմք մեր խոր համակրութիւնները, նախախնամութեան շնորհիւ հայրենիքին համար ազատած ըլլալն առ թիւ՝ մեր ջերմ շնորհաւորութիւնները: Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ իր արժանաւոր ներկայացուցիչը:

Հայկական Միութեան

Սօֆիա, 4 փետր.

Կեղրոնական Բօմիթէ

Ստացուած են նաեւ հետազոտող հետեւեալ անձնաւորութիւններէն. Տօք. Արամ եւ Տիկինը՝ Նիս, Լեւոն Սիրանյ՝ Ժընեւ, Տիրացո՝ Լոնտոն, Դ. Շահյանեան՝ Մարսիլ, Պարսամեան՝ Անվիւր, Տօք. Մանսիւնեան՝ Լոնտոն, Խնդիրեան՝ Պուրէշ, եւն. եւն.

Մասնաւոր նամակով իրենց արագին համակրութիւնները յայտնած են.

Պրիքիշ Արմենիա Բօմիթէն հետեւեալ բովանդակութեամբ.

Բօմիթէի անդամներուն ի վիճակ կը փութամ Ձեզ յայտնելու մեր համակրութիւնը, այն ցածոգի յարձակման առթիւ, որուն զոհը եղաք վերջին անգամ: Սրտագին կերպով կը շնորհաւորենք Ձեզ՝ Ձեր բախտաւոր ազատութիւն առ թիւ և կը սիրենք յուսալ որ ի վիճակի պիտի ըլլաք շարունակելու Ձեր գործը, Ձեր երկրին համար, առանց ուշադրութիւն ընծայելու չարակամ արամադրուած անձերու: Սրտագին բարեմաղթութիւններով Ձերդ անկեղծօրէն

Բօմիթէի քարտուղար

ԼԵՕՆԸՐ ԼԻԶ

Ազգերու Լիկայի մօտ փրանսական գործերու տնօրէն Պր. Ժան Կու հետեւեալ կերպով կ'արտայայտուի մասնաւոր նամակով.

Ես երջանիկ կ'զգամ ինքզինքս իմանալով որ անվատ ազատուած էք այն ոտորին ոճրափորձէն, որուն քիչ մնաց զոհ հրժայիք. ընդունեցէք եւլն. եւլն.

ԺԱՆ ԿԻՈ

Հաշուքեան Համաժողովի Ասրպատականի Հանրապետական պատուիրակութեան նախագահ՝ Թօֆիսյանի հետեւեալ համակն ուղղած է.

Յանուն Ասրպատականի Համապետութեան Պատուի-

րակութեան, որուն ես կը նախագահեմ, պատիւն ունիմ յայտնելու, Պրն. Նախագահ, գոհունակութեան և շնորհաւորութեան զգացումներս Ձեզ սպաննացող փառանքէն ազատուած ըլլալնուդ համար: Ար յուսամ որ շուտով Ձեր առողջութիւնը ամբողջովին պիտի վերագտնէք: Հաճեցէք ընդունիլ եւլն. եւլն.

ԹՕՓԶԻՊԱՇԷԼ

Հոյանսայի պուլխարական դեսպանը կը գրէ.

Սիրելի Բարեկամս

Թերթերէն իմացայ այն տխմար և գարշելի ոճրափորձը, որուն քիչ մնաց զոհ ըլլալիք, բայց նախախնամութիւնը — որովհետեւ ի՞նչ կրնար ըլլալ մեր յոյսերուն ապաւենը այս օրերուն, երբ վայրագ եսամոլութիւնը կը յաղթանակէ — նախախնամութիւնը թոյլ չտուաւ որ յիմարի մը, կամ ապուշի մը հարուածին զոհ ըլլար Ձեզի պէս մարդ մը որուն Հայաստանը աւելի քան երբեք պէտք ունի ամենավերջին պայքարին համար, որմէ կախուած է իր ապագան: Այս առթիւ ես ուրախացայ Ձեզ և Ձեր երկրին համար:

Ըսէք ինդրեմ Տիկին Ա. Տարոնեանին, որ անմիջապէս լուրը ստանալու՝ ամենէն առաջ մտածեցի իր մեծ յուսովն և ապա ուրախութեանը վրայ, տեսնելով Ձեզ բոլորովին անվատ: Յայտնեցէք իրեն իմ յարգանքներս: Ընդունեցէք եւլն. եւլն.

29 Յունի.

Ս. ՌԱՏԷՓ

Հայաստանի Միջազգային լիկը Ժընեւիէն 28 Յունի. թուականով կը գրէ.

... Ձեզ կը շնորհաւորենք այս դէպքին երջանիկ ելքին համար: Գուք փրկուեցաք այն մեծ դատին համար որ մենք կ'ուզենք շարունակել պաշտպանելու մեր առողջ միջոցներով եւ կորովով:

Հաճեցէք յայտնել Տիկին Ա. Տարոնեանին մեր բոլոր համակրանքն ու շնորհաւորութիւնները:

ՏԸ ՄՈՌՍԻԷ

"Արմինիըն Ռէտ Բուս Էնտ Ռէթուճի Ֆընտ" ի փառաւոր Միս Էմիլի Ժ. Ռօպինսոն կը գրէ 27 Յունի ին.

... Թերթին մէջ կարգացի Ձեր կեանքին դէմ եղած երեկուտն ոճրափորձին մասին: Կ'շատապէս իմ շնորհաւորութիւններս յայտնել Ձեր ազատութեան համար որ պարտիք ապահովարար Ձեր արթնամտութեան: Ամբողջ համակրութիւններս Ձեզ և Ձեր Տիկնոջ հետ է: Միայն իմէ այդ դժբախտ երիտասարդը Թուրք կամ Մեծամասնական ըլլար թերեւս Հայկական դատը լաւ աչքով պիտի դիտուէր Քրանսական կառավարութեան և միւս պետութիւններու կողմէ: ...

Ընդունեցէք եւլն. եւլն.

Է. Ժ. ՌՕՊԷՆՍՕՆ

Հ. Հ. Պերլինի դիւանագիտական ներկայացուցիչը Պերլինեն կը գրէ.

Կարգաւորվ լրագրում Զեր անձի դէմ կատարուած ոճրափորձի մասին, շտապում եմ արտայայտել Զեզ, յարգելի հայրենակից, իմ անկեղծ ուրախութիւնս և շնորհաւորանքս, որ այդ ոճրական ձեռնարկը բարեբախտաբար չհասաւ իր նպատակին: Անհամբար սպասում ենք տեղեկութեան և մանրամասնութիւններին այդ մասին:

Տօքթ. ԿԻՆՏԻԼՏ

Սիրելի Պրն. Ահարոնեան

Թերթերէն կ'իմանամ որ ցածոյի մահափորձ մը կատարուած է Զեր կեանքին դէմ: Աւրախ եմ սակայն որ ոչ իսկ վիրաւորուած էք և թէ Զեր անձնական քաջութիւնը փրկած է Զեզ: Հաճեցէք ընդունիլ իմ լաւագոյն ժողովանքներս Զեր ազազայ երջանկութեան և բարեւուլութեան համար ինչպէս նաև ի կատար ածելու համար հայրենիքին հանդէպ Զեր ունեցած յոյսերը:

Լոնտոն 28 Յունիս

Ա. ՎԼԻԵԱՄՍ

Անդամ Անգլ. Խորհրդարանի և
Նախագահ Պրիքիս Արմենիա Փոլիթիքի

Անգլիոյ գաղութային էնսքիքիւի անդամներէն մին կը գրէ.

Առթիւն կ'օգտուիմ անկեղծորէն շնորհաւորելու համար Զեզ, Զեր կեանքին դէմ կատարուած ոճրափորձէն անմիջապէս ազատելու համար, ինչպէս կ'իմանամ այսօրւան «Թայմզ»էն: Յայտնապէս Զեր արթնամտութիւնը օգնած է Զեզ՝ Զեր թանկագին կեանքի փրկութեան համար: Եւս առթիւ խնդրեմ ընդունեցէք իմ լաւագոյն բաղձանքներս:

Թ. Տ. ԻՐՎԻՆԿ

Ազգային և Տարազ քերթերու Դարաքայի ու Զանգեզուրի Հայերու պատուիրակ Պր. Տիգրան Նազարեան Մօսքէ Քարյօհն կը գրէ.

...Աւելի ևս մըրմընեց, ճնշուեց, բեկոր բեկոր սիրտս, աւելի ևս խորասուկեց ինձ վշտերի մէջ երէկայ Յունիսի 26-ին առ 10 Ժ. 30 ր. առ Marceau 27-ի Զեր դէմ ցոյցը:

Ո՛չ... անմեղ մանուկներին, կոյսերին հեղեղ արիւնով ոռոգւած, բիւր բիւրոց ոսկորներով պարարտացրած, կակիծ—հառաչանք — տառապանքով աղօսած «Արցունքի հովիտը»ը երբեք երբեք չի ցամաքիլ, յասմիկ ու շուշան չեն ծաղկել և բուրաղ, քանի որ մեր գաղանցած, այլասեռած բողբոջ սերունդը չի սթափուիլ ու գիտակցիլ որ բունի ուժը չէ այն զէնքը, որով պէտք է իրաւունք պաշտպանել:

Ողբում եմ մեր դառն արդի վիճակը: Զգւանքս ոճրագործին:

Թող նախախնամութիւնը իր հովանին անպակաս անի Զեզանից: Զերմ համոյրներով:

Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Պ. Պետրոս Հայրանեան Լօզանէն 29 Յունիս. քուականով կը գրէ.

Յարգելի Տէր Նախագահ

Խորին յուզմամբ և վայրացմամբ իմացայ այն ոճրային մահափորձին մասին որ Զեր դէմ գործուեցաւ յիմար Հայու մը կողմէ: Մեծ է ուրախութիւնս՝ շնորհիւ Զեր պաշարեան և կորովին լիովին անմիջապէս անուշնուզ, որով Հայ ազգը, Զեր կազմած միաբերը և Զեր բարեկամները երջանիկ պիտի ըլլան երկար տարիներ վայելելով Զեզ սր, տարբեր և էական գործունէութեանց մէջ, ա՛յնքան սէր ցուցուցած էք իրենց և ա՛յնքան պատիւ և օգուտ պատճառած էք:

Զերդ անկեղծօրէն և սիրալիբ յարգանքք և լն.

Պ. ՀԱԼԱՃԵԱՆ

Մասնաւոր սրտառուց նամակներ ուղղած են նաև հետեւեալ պարոնները.

Հուրսա, Փէյոլ, Փիէս Մարտէլ, Լէօն Մաքքաս, Խ. Ներսէսեան, Տօքթօրներ՝ Սալլի և Արապեան, Տիգ. Միրզայանց, Կ. Խուպիկեան, Մ. Զանանեան, Կ. Տէր Կարապետեան, Սեզրակ Վարժապետեան՝ երկրաչափ, Տիկին Կ. Փէթերս Շառիէ, Գառնիկ Ֆետիլեան, Էն. Էն:

Համակրական եւ շնորհաւորական խոսքերով այցելած են եւ մասնաւոր քաղքեր ունին ՊՊ. Էլէֆթերիօս Վենիզելոս՝ նախկին վարչապետ Յունաստանի, Ն. Փօլիթի՝ նախկին Արտաքին գործերու նախարար Յունաստանի Քիրիաքոս Յոլէնո՝ Տնօրէն՝ Խաղաղութեան համաժողովի մօտ Հելլէնական քաղինէին, Լէօնիտաս Եասօնիտէ՝ նախագահ Պօնտոսի Հելլէն ազգային ժողովի, Սիանուտի՝ անդամ՝ Հ'աղատագրուած Յունաստանի Ազգային ժողովի, Վասիլ Մաքլաքօֆ՝ ղեկավար Ռուսաստանի, Էօթէն Կէկէչքօրի՝ փոխնախագահ և Արտաքին գործերու նախարար Վրաստանի Հանր կառավարութեան:

Խաղաղութեան վեհաժողովի մօտ Վրաստանի Պատուիրակութեան հետեւեալ անդամները Սօսիաթար Ասիաթանի, Նիքօլա Ճաքելի, Ալեքսանդր Ապխազի, Սիմօն Շիֆոնէ, Վիքթօր Պապէթ, Իլամազ Տատէքելեանի, Մ. Արապէլէֆ:

Զէրմայէֆ՝ նախագահ և Իգլորահիմ Խան, Իգլորահիմ պէկ՝ քարտուղար հիւսիսային Կովկասի ղեկաւարիտական Միսիօնի, Լուքաս Պիճ՝ Քուկանի խորհրդարանի նախագահ, Վլատիմիր Փրիտօնօֆ, Քրէտէրիք Մաքլէր՝ փրօֆէսօր, Ալպէր Ամատիէօ՝ Տնօրէն Փաքալ գլորոցի և անդամ Ռուսիական բարձրագոյն խորհրդի, Տօքթ. Կ. Քէյմ, Փօլ Փուլճի՝ անօրէն Լ. Միւն Էմբլէթէթ թերթի, Արար Տըլաօի, Փօլ Պալառ՝ նախագահ հիւսիսային Կովկասի ճարտարարուեստական և մետաղագործական ընկերութեան, Տէր և Տիկին Շվարց Պուս, Գոնթ Տը Հօշթիլէ՝ անօրէն «Լը Ռէվէլ Օրիանթալ» թերթի, Ալեքսանդր Թամամչէֆ, Եգուարդ Նափիլ, Շարլ Քիյաս, Անտրէ Մանտլսթամ, Էմիլ Փիլյօ, Պօլոս Նուպար, Գաբ-

բիէլ Նորատուհնեան, Գ. Սինապեան Տօբթ. Փօլ Գօլօլեան, Առաքել Մէլիք-Մինասեան, Տիկին Ա. Տէր-Մարութեան, Վ. Ծ. Վրդ. Քիպարեան-Արջուկեան, Արամ Ճէվա-Տիրճեան, Ա. Ն. Կէվրէզ, Առաքել Առաքէլեան, Կրէկուառ Քիանճուհեան, Արշակ Ինճէեան, Ռաֆայէլ Շիշմանեան Մ. Մէղպուրեան, Մ. Տէրպէտէրեան, Կ. Մաթէոսեան, Նուպար Կիւլլապեան, Հրանդ Ալեանաք, Պօղոս Մարլի, Հ. Սէլեան, Օ. Պօյաճեան, Տօբթ. Ս. Մէլիք Փարաստանեան, Լաքուա Հիւնքարպէլեան, Էլի Մայիլօֆ-Մայիլեան, Մ. Մինասեան, Կ. Բասմաճեան, Ռ. Որբերեան, Մ. Մէղպուրեան, Լն. Լն. Լն.:

ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Բաղուած մասնաւոր աղբիւրէ)

Դեկտեմբերի 2-ին Հայաստանում կատարւած է յեղաշրջում: Այս յեղաշրջման, սովետիզացիայի իսկական պատճառը պէտք է համարել Ռուս-տաճկական համաձայնութիւնը, որի գործնական արտայայտութիւններէնք ամենաէականը տաճիկներին արշաւանքն էր, առանց պատերազմ՝ յայտարարելու:

Անհերքելի փաստ է որ եթէ չը լինէր այդ արշաւանքը և տաճկական յաղթանակը, տեղի չը պէտք է ունենար նաեւ Հայաստանի սովետիզացիան:

Ռուս-տաճկական համաձայնութիւնից և մայիսեան Մեծա-մասնական անյաջող ապստամբութիւնից յետոյ՝ անուպատելի չէր տաճկական արշաւանքը, մանաւանդ եթէ նկատի ունենանք այն հանգամանքը, որ Ռուսաստանը դիտարկեալ ձրգ-ձրում էր հաշտութեան կնքումը Հայաստանի հետ: Եւ իսկապէս, դեռ սեպտեմբերի սկիզբներին մեր հետախուզական բաժանմունքին յայտնի էր, որ տաճիկները պատրաստուում են յարձակման սեպտեմբերին:

Այդպէս էլ եղաւ. սեպտ. 13-ին աաճիկները յանկարծակի սկսեցին իրենց կանխամտածուած և կանոնաւորապէս ծրարուած արշաւանքը, ամենից առաջ Օլթիի ուղղութեամբ, Այդ ժամանակ Կարաի ձախտում գտնւած հայկական զօրա-մասերը որոնք թուով 3000 հոգի, զբաղւած էին Կաղզւան-Օլթի ռազմաճակատի վրայ, հրահանգ են ստանում ատիժանաբար յետ քաշւել դէպի Սարիզամիշ՝ մաս մաս չջարդւելու համար:

Ըստ տեղեկութիւնների, տաճկական ոյժերը երեք տիւիզիա էին (մօտաւորապէս 12,000 հոգի) և նոյնքան էլ անկանոն քրդական և թրքական կամաւորական խմբեր: Սակայն վերջը բանակցութիւնների ժամանակ մեր ձեռք բերած տեղեկութիւններից պարզւում է, որ Սարիզամիշի ձախտում եղել է նաեւ տիւիզիա, Իգդիրի և Նախիջեւանի ձախտներում մի տիւիզիա և մի տիւիզիա էլ Էրզրումում՝ ղրմադրութիւն յոյց տալու համար այն ոյժերին, որ կարող էին երեւան գալ, Տրապիզոնից Դաշնակից ոյժերի ցամաք ելլելով:

Խողափութեան բանակցութիւնների ժամանակ Թուրքերի հետ Ալեքսանդրապոլում, պարզեց նաեւ, որ Անգորայի կառավարութիւնը, նախ քան Հայաստանի վրայ յարձակւելը, բա-

նակցութիւններ էր վարել Վրաստանի կառավարութեան հետ կապմանաւորւել էր որ վերջինս չեզոքութիւն պահպանէ, զրուելով Լոռայ շրջանը չեզոք գոտիով և Թիֆլիսի նահանգի Հայաստանին կցւած մասերով, այսինքն Շահալի և Ջալալ-Օղլին: Եւ իրօք, երբ Կարսը զբաղուեց, վրացական զօրքերը մտան չեզոք գոտի և Հայաստանի վրական դիւանագիտական ներկայացուցիչ զօրավար Բարալովը Գարաբախի յայտնեց պաշտօնապէս, որ վրացական զօրքը պէտք է զբաղէ չեզոք գոտին, Ջալալ-Օղլին և Շահալին: Հայաստանի կառավարութիւնը խիստ բողոքեց և զրա հետ միասին հրահանգեց զօրավար Արեշեանին որ նա ամրացնէ վրացական սահմանները, բայց չղիմարէ զէնքով, բաւականանայ միայն բողոքելով ամենախիստ կերպով:

Վրացական առաջխաղացումը կանգ է առնում մի քանի օրով Հայաստանի սահմաններում զրուելով չեզոք գոտին: Մի քանի օր յետոյ Հայաստանի կառավարութիւնը ստիպւած է լինում բանակցել և որոշ պայմաններով երեք ամիս ժամանակով զինում է ժամանակաւորապէս չեզոք գոտին և Թիֆլիսի նահանգի Հայաստանի անցած մասը:

Ահա այս գնով էր պայմանաւորւած Վրաստանի չեզոքութիւնը: Սակայն Տաճիկները չը վստահելով Վրացիների վրայ, միաժամանակ պայմանաւորւել էին Սովիետական կառավարութեան հետ, որ եթէ Վրացիները աջակցին Հայերին կամ վտանգեն Տաճիկների գոյութիւնը Հայաստանում, սովիետական Ռուսաստանի զօրքերը պէտք է Տաճիկներին օգնութեան հանին: Ահա այսպիսի ապահովութիւն ձեռք բերելուց յետոյ միայն Տաճիկներն արշաւում են Հայաստան:

Հայաստանի կառավարութեան առաջ զբաղւած էր երկու հարց, երկու հիմնական խնդիր. ուժեղացնել ձախտը, պաշտպանել տաճիկներից, (որի համար և յայտարարւում է նոր զօրահաւաք մինչև 32 տարեկան հասակը) և աշխատել դիւանագիտական ձանաղարհներով կտեցնել Ռուսների յարձակումը Ղազախի ձախտից ու ապա Վրաստանի ու Դաշնակիցների նուազագոյն օժանդակութիւնը ստանալ այդ անհաւասար պայքարի մէջ:

Նորակոչների զօրահաւաքը ընթանում է աննախընթաց յաջողութեամբ: Ազգաբնակչութիւնը ներառեւում է ամէն ինչ ձախտի համար և կառավարութիւնը յաջողում է երկու շաբաթաց ընթացքում կեդրոնացնել Իգդիրից մինչև Մերտէնէք (չհաշւելով միւս ձախտները) մօտ 25,000-նոց մի բանակ իր բոլոր պարագաներով: Զօրքին և ազգաբնակչութեան տրամադրութիւնը տեղ տեղ բարձր էր. իսկ ընդհանուր առմամբ միջակ: Բոլոր կառակցութիւններն ու հոտանքները առանց բացառութեան մի ամբողջութիւն կազմած՝ գործի վրայ էին և վստահ որ անգամ տաճկական գերազանց ոյժերին պիտի յաղթեն:

Նախապատրաստական աշխատանքներին զուգընթացաբար ընթանում էին նաև դիւանագիտական դիմումները:

Երեւանում և Թիֆլիզում ընդհանուր զրուիւնը պարզեց Դաշնակիցների բոլոր ներկայացուցիչներին: Ըստ սովորութեան, բոլորն էլ պատասխանեցին, որ հեռագրել են իրենց կառավարութիւններին և սպասում են հրահանգ - պատասխան:

Ստոկոլմ երկու անգամ եկաւ Հայաստան, այցելեց Կարս ձախտը և գոչ վերադարձաւ Թիֆլիզ: Բնդառաջ գալով Հայաս-

տանի կառավարութեան բաղձանքին, միջնորդ հանդիսացաւ Հայ-վրացական դաշինք կնքելու համար, սակայն Վրաց կառավարութիւնը մերժեց կորականապէս, յայտարարելով որ Տաճիկներէ դէմ՝ չեն կարող կուել, որովհետեւ իրանց չեղածութիւնը ապահովուած է: Վրացիք խոստացան մեզ օգնել այն նիւթերով, որ մեզանում պակասում են իսկ նրանք ունեն: Սակայն այդ էլ չարեցին և մերթ ընդ մերթ նոյն իսկ խանգարեցին և կատկածամտութիւն մտցրին մեր զօրամասերի և հրամանատարութեան միջև: Այդպէսով Հայաստան իրապէս ունէր շարժումներ և ինքնաշարժումներ և Վրացիներէ իր գոյութեան համար մղուելիք ճակատագրական պայքարի ընթացքում:

Դրական ոչինչ չէինք սպասում նաեւ Ռուսներէ, որովհետեւ նրանց և տաճիկներէ միջեւ կնքուած համաձայնութիւնը պարզ երեւում էր այն հեռագրերէ, սրտք տրուում էին Ձիչերին կողմից Հայաստանի կառավարութեան՝ միջնորդ հանդիսանալու նպատակով Ձանդեղուրը դրաւելով, Ղարաբաղ-Ձանդեղուրի վրայով տեղափոխելով հնչուն դրամ (մօտ 8 փութ ոսկի), Տրապիզոնի ուղղութեամբ ռազմամիջոց, դրամ և զինւորական զործիքներէ կտորներ ուղարկելով, Բագուում կայացած Արեւելքի ժողովուրդների համագումարում, իրենց արտասանած ճառերի մէջ և այն կոչից որ բաց էր թողնուած Մոսկուայի Երրորդ Ինտերնացիոնալի կողմից, ուղղուած Արեւելքի ժողովուրդներին և յատկապէս Հայերին և Տաճիկներին: Աւելորդ չենք համարում յիշատակել այն շատ ակներեւ փաստը, որ Օլթիի, Սարիղամիշի և Կողբի ուղղութիւններով եղած տաճիկական նախաշարժումներէ, ինչպէս նաեւ վերջին արշաւանքի ժամանակ, Ղազարի և Ձանդեղուրի ճակատում Մեծամասնականներն սկսում էին թեթեւ յարձակումներ և կամ ուժեղ զին. ցուցեր, մեր զօրամասերը զբաղուած պահելու նպատակով: Այդպիսի դրութեան մէջ իսկ, այնուամենայնիւ, բանակցութիւններն սկսեցին Երեւանում Հայաստանի ռուսական լիազօր ներկայացուցիչ Լըզրանի հետ, որ և հոկտ. 21-ին ստորագրուում է մի նախապայման, որի հիմնական կետերը հետեւեալներն են:

1 — Ռուսաստանը հրաժարւում է Հայաստանի օգտին ամբողջ Երեւանեան նահանգից, Ղարսի նահանգից, Ձանդեղուրի գաւառից, Ղազարից և Լօււից:

2 — Տաճիկական զօրքերը դադարելում են ամբողջ Ռուսահայաստանը մինչեւ 1914 թւի. սահմանը:

3 — 1914 թւի. սահմանագծից մինչեւ Տրապիզոն, Երզրում, Մուշ գիծը քաշուում են տաճիկական զօրքերը և թողնուում է միայն տաճիկական վարչութիւն, որից յետոյ Ռուսաստանի օժանդակութեամբ և աջակցութեամբ ոկուում են բանակցութիւններ Անգորայի և Հայաստանի միջեւ սահմանների վերջնական ճշգրտման խնդիրը լուծելու նպատակով:

4 — Ռուսաստանը տալիս է Հայաստանին նաւթ, 3 միլիոն ռուպլով:

5 — Ռուսաստանը զիջում է նաեւ մի քանի երկրորդա-

կան նշանակութիւն ունեցող կրթական արժէքներ, Մոսկուայի Լադարեան Ճեմարանի գրադարանը և այլն:

Այս համաձայնութիւնից յետոյ Լըզրանին առաջարկ եղաւ անցնել համաձայնութեան կէտերի իրականացման: Սակայն նա անհրաժեշտ համարեց զնալ Բագու, Աղբիւշանի հետ սահմանների հարցը վերջացնելու և Մոսկուան տաճիկական պատուիրակութեան հետ որոշ եղրակացութեան բերելու նպատակով:

Բագուում քննել են այդ խնդիրը, երբ Հայաստանում տաճիկները անարդել յառաջ էին շարժուում և Բագուի Մեծամասնական մարմինը մերժած է այդ պայմանագիրն ընդունել՝ բացառութեամբ միայն Հայ Կոմիւնիստների, որոնք ամբողջ պայմանագիրը վերցրել տարել են Մոսկուայ գալն պաշտպանելու նպատակով:

Այդ ժամանակամիջոցում մեր զօրքերը թողել էին արդէն Կողբը, Կաղզանը, Սարիղամիշը և Արտաշանը ու ամբողջ դժի վրայ նահանջում էին քաղաքից 25-30 վերստ հեռավորութեան վրայ, որտեղ հրամանատարութիւնը որոշել էր տալ զճակահան ճակատամարտը, վստահ, որ այդ նահանջի ժամանակամիջոցում կը կեղրոնացան նորակից զօրամասերը անհրաժեշտ կէտերում:

Հոկտ. 14-ին տեղի է ունենում հայկական զօրքի անդրանիկ յարձակումը, որը սկզբում ընթանում է շատ յաջող և տեղ տեղ մերոնք առաջանում են 15-20 վերստ: Տաճիկները անկարող դիմադրելու մերոնց՝ նահանջում են: Սակայն երեկոյեան դէմ թաքման օյժեր ստանալով, հակազդուով յետ են շարժւում մեր մի զօրասիւնը, որի պատճառով միանինքն էլ հարկադրաբար նահանջում են և գրաւում են յարձակումից առաջ գրաւած գիծը:

Այս անյաջող փորձը հրամանատարութիւնը բերում է այն եղրակացութեան, որ ընդհ. ճակատամարտը պիտի յետաձգել մի առ ժամանակ և մինչեւ որ նախապատրաստութիւնները կատարին ամբողջ գծի վրայ և բոլոր զօրամասերը լինեն առանց թերութիւնների ու բռնեն իրենց նշանակած դիրքերը:

Այս յարձակումը սպասում էր մօտաւորապէս հոկտ. վերջերին և երբ հոկտ. 22-ի երեկոյեան ժամի 6-ին կառավարութիւնը ստանում է Կարսի բերդապետ զօրավար Փիրումեանի հեռագիրը, ըստ որի ճակատն ամուր է, զօրամասերի սրամագրութիւնը բարձր, հասարակութեան ոգեւորութիւնն անկարողելի և յաղթանակն ապահովուած: Այլ ևս ոչ որ չէր կասկածում, որ մի քանի օր յետոյ թշնամին պիտի թողնի մեր երկիրը ու թերեւս մեր զօրքերը պիտի նոյն իսկ գրաւեն Տաճիկահայաստանի մի մասը:

Նոյն տրամադրութեամբ երկու օր առաջ Կարսից վերադարձել էին սպարապետ զօրավար Նազարբեկեանը և նախարար Վրացեանը:

Տաճիկներէ յամառ յարձակումները 4 օր շարունակ, անյաջողութիւն էին ունեցել նաեւ Իգլիրի ճակատում, ուր Դրօի հրամանատարութեամբ մեր զօրամասերը ցուց էին տուել հե-

րոտական գիմադրութիւն և յամառութիւն:

Բայց կատարեց անսպասելին և անհասկանալին:

Կարսն ինկաւ հոկտմբ 30-ի ցերեկաց ժամը 1-ին, այսինքն զօրավար Փիրուսեանի հեռագրից մի քանի ժամ անց...

Բազմաթիւ են պատճառները այդ պատմական զբաղողութեան, բայց արժէ կանգ առնել մի քանիսի վրայ որոնք լուրջ ուշադրութեան չեն արժանացել մեր հրամանատարութեան կողմից իւր ժամանակին: Այդ պատճառներն են,

1 — Ցեֆեիական դժարութիւններ. զօրամասերի փոխադրութիւնը մեզ մօտ չէր կատարուում նպատակաշարմար արարութեամբ երկաթուղիների անկանոնութեան պատճառով որ արդիւնք էր նաւթի և վազմաների բացակայութեան:

2 — Սաեֆաանի երկաթուղիներ և Եսաուրիներ. — Հայաստանը մի երկիր էր որ ունէր բազմաթիւ ճակատներ, որոնցից իւրաքանչիւրում կարելու էր որոշ ոյժ կեդրոնացած պահել անակնկալների չհանդիպելու համար: Նրա գլխաւոր ճակատներն էին Արտասան, Օլթի, Կարս, Կոլք, Իգլիր, Նախիջեւան, Ջանգեզուր, Դարալգեազ, Բասար Կեշար, Ղազախ և չեղօք գօտի որտեղ սահմանապահ գնդեր էին պահուում: Այդ ճակատի առանձնայատկութիւնը այն էր, որ զրանցից բոլորը, բացի Վրացականը, գտնուում էին անմիջական թշնամիների, Աղբրէջան, Սովետական Ռուսաստան, և Անգորայի կառավարութեան կից պետութիւններ, որոնք գործում էին համաձայն և որոնք իրենց աշխարհագրական դիրքով օգտուում էին Հայաստանը: Բաւական է քարտէսին վրայ նայել համոզելու համար, որ այս ճակատների երկարութիւնը իրար հետ կցւած, մի քանի հարիւր վերստի են հասնում և որոնց պաշտպանութիւնը անհրաժեշտ էր ընդհ. կռիւի յաջողութեան համար:

3 — Զօրի յոգնածութիւն. — Հայկական զօրաբանակն ամէնից յոգնածն է աշխարհի և յատկապէս Կովկասեան զօրքերի համեմատութեամբ: Բացի ընդհ. պատերազմը, որի մէջ նա իր մասնակցութիւնն է բերել, ռուսական բանակի մէջ ևս 1917թ. սկսած, մեծամասնական նահանջից յետոյ, նա միայնակ ունեցաւ բազմաթիւ կռիւներ, Տաճիկների արշաւանքին դէմ կանգնելու ժամանակ: Իրեւ իրապէս ապացոյց կարելի է առաջ բերել 1920 թ. մայիսի 1-ի շարժումներից յետոյ եղած կռիւները, որի մէջ հայի բանակը կռուել է հերոսաբար, զիմադրել է տոկոսութեամբ և... աստիճանաբար սպառել է իր կորովը:

Հինգ ամուսյ բոլոր ճակատներու եղած զօրական այս լարւածութիւնը ու կռիւների անընդհատութիւնը չէր կարող անհետեւանք մնալ և իր հետ չտանել բազմաթիւ փորձուած և մարզւած զինուորներ ու սպաներ, որոնց կարիքն այնքան զգացւում էր Կարսի անկման նախօրեակին:

4 — Հրամանատարական կազմի բուլութիւնը. — Այդ պակասը շատ մեծ էր և ամէն քայլափոխում զգացւում էր: Ռուսական բանակում երկրորդական պաշտօններ վարող զինուորականները, որոնք լաւ պարագրեւներ էին մեծ բանակում, շուտափոյժ կերպով տոտիճանի բարձրացում ստացան և իրենց նոր պաշտօններին անհամապատասխան լինելով, վճռական րոպէին երեւան հանեցին իրենց թուլութիւնն ու անկարողութիւնը, նամանաւանդ որ նրանք զինուորական և պատերազմական աւանդութիւններով կապւած չէին իրենց զօրամասերի հետ:

5 — Սպայութեան պակաս. — Հայաստանի Հանրապետութիւնը իր գոյութեան կարճ ժամանակամիջոցում չունեցաւ

հնարաւորութիւն՝ ստեղծելու սպայութեան թարմ և նոր կազմ և հայկական զօրաբանակը կառավարւում էր ռուսական բանակից մնացած Հայ սպաներով: Վերջին երկու տարւայ ընթացքում բազմաթիւ կռիւների շնորհիւ այդ սպայութիւնը նւազեց, պակասեց և զօրամասերը մնացին աւելի քիչ թւով և կամ նոր նշանակւած սպաների ձեռքը, որոնք յաղթանակ տանելու անհրաժեշտ փորձառութիւնը չունէին:

6 — Նոր Զօրաւարժ. — Երկրի տնտեսական անկումը և այն պարագան որ երկու տարւայ ընթացքում սովի ճիւրաններում տառապած ժողովուրդը սր հայիւ կարողացել էր վար ու ցանք անել և պէտք էր հնձէր՝ իր ձմեռւայ պաշարը, ապահովելու համար իրան այն հնարաւոր պայմանները, որոնք պակասում էին մեր տաքնապալի երկրում, այս պարագաները թոյլ չէին տալիս կառավարութեան երկրի երիտասարդութիւնը զէնքի տակ կանչել աւելի վաղ, վարժեցնել նրան զինուորական ծառայութեան և պատերազմի հետ կապւած դժարութիւններին: Վերջին պատերազմից առաջ մինչև 32 տարեկանները զէնքի տակ էին արդէն և այդ պատճառով էլ վերջին զօրաշարժը, որ տեղի ունեցաւ պատերազմի ընթացքում, արագօրէն և առանց դժուարութեան, ձիշա է շատ թւով զինուորացուներ տեց, բայց նազ վարժւած՝ որովհետև ժամանակ չկար նրանց վարժեցնելու:

7 — Նոր զէնքերը պակաս դժարութիւններ չյարուցին, նաեւ անգլիական նոր տեսակի զէնքերը, որոնց գործածութեան վարժութեան համար բաւական ժամանակի պէտք կար: Ռուսական հրացաններին վարժւած զինուորները հնարաւորութիւն չունէին անմիջապէս ուղղութեան ենթարկւելու և այդ բացառաբար աղիւց զիմադրական ոյժի և արագ գործողութեան վրայ:

8 — Ժողովուրդի յոգնածութիւնը. — Հաճախակ այն երեւոյթին, որ Հայ ժողովուրդը անկարողելի ողբերութեամբ ընդառաջ էր գնում կառավարութեան պահանջներին, տալիս էր ամէն ինչ, թրքական վտանգը կատեցնելու համար, այնուամենայնիւ նկատելի էր յոգնածութիւն, դեռ հնուց մնացած վախ և անմիջապէս խուճապի ենթարկւելու սովորութիւն: Ամբողջ վեց տարի է ինչպէս մի բուռն ժողովուրդը անհաւատար կռիւ է մղում, տալիս է իր լաւագոյն զաւակներին, զոհաբերում է միլիոնաւորներ իր աղատութեան և անկախութեան համար, բաղխում է բոլոր Դաշնակիցների դռները, սպասում է զրոյի գործնական օժանդակութեան և այդ բոլորը, աւանդ, ի զուր: Նա մնում է միայնակ, շրջապատուած թշնամիներով, անտեսապէս քայքայւած, մշտական յարձակումների ենթակայ, և օրէ օր յուսահատութիւնն աւելանում է, ընկճւում հոգեպէս և դառնում անընդունակ իւրաքանչիւր մի նոր, ուժեղ և կազմակերպւած հարւածի դիմադրելու:

Բացի այդ պատճառներից, կար և այլ կարեւոր հանգամանք. Հայ զօրամասերը համոզւել էին, որ Տաճիկները և Ռուսները միասին են յարձակւում Հայաստանի վրայ, որպէսզի նա ընդունի զինադադարի պայմանները:

Այս պայմանները ընդունեց և գործադրեց նոյ. Տին: Նոյն օրը ստացւած են սակայն Անգորայի կառավարութեան հետեւալ նոր պայմանները, որոնք եթէ չընդունէին, հաշտութեան բանակցութիւնները չէին սկսելու:

(Շարունակել)